ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«29» հունիս 2023թ. ք. Երևան, Ս. Դավթի 87Ա

ՈՐՈՇՈՒՄ N 565-Ա

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս քննարկելով ֆիզիկական անձ Լևոն Մկրտիչի Գրիգորյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ N3065/2022/ԿՈՒՎ4/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ Լևոն Մկրտիչի Գրիգորյանի (Երևան, Աջափնյակ, Լենինգրադյան, շ. 23/13, բն. 9 ՀՎՀՀ 28091372, ՀԾՀ՝ 1307610846) չկատարված հարկային պարտավորությունը 01.07.2022թ. դրությամբ կազմել է 44.233 դրամ, որից հարկ 43.502 դրամ, տույժ՝ 731 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով 02.06.2023թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկությունների համաձայն ֆիզիկական անձի կողմից 21.04.2022թ. ԵԱՏՄ անդամ պետությունից ՀՀ տարածք է ներմուծվել ապրանքներ, ինչի արդյունքում գերազանցվել է ՀՀ կառավարության 2020թ փետրվարի 13-ի «ՀՀ օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից ՀՀ ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակներն ու ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու պարտավորության վերաբերյալ» թիվ 171-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված ակնհայտ առևտրային չափաքանակները:

Ֆիզիկական անձը ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 59-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ պարտավոր է ՀՀ կառավարության 2020թ. թիվ 171-Ն որոշմամբ սահմանված չափաքանակը գերազանցող մասի համար Օրենսգրքի 77-րդ և 78-րդ հոդվածների համաձայն՝ հարկային մարմին

ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիր և վճարել արդյունքում առաջացող ներմուծման ավելացված արժեքի հարկը՝ մինչև ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի և 61-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետությունից ՀՀ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ներմուծվող ապրանքի ձեռքբերման արժեքը, արդյունքում Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ԱԱՀ-ն կհաշվարկվի 20 տոկոս դրույքաչափով:

Ֆիզիկական անձ Լևոն Մկրտիչի Գրիգորյանի կողմից իրականացված վերը նշված գործարքի մասով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացվել ներմուծման հարկային հայտարարագիր և չի կատարվել հարկերի վճարումը:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը ներմուծման ԱԱՀ-ի մասով կազմում է 44.233 դրամ, որից հարկ 43.502 դրամ, տույժ՝ 731 դրամ, որն առաջացել է ֆիզիկական անձի կողմից կատարած ներմուծման գործարքի արդյունքում, ինչպես նաև հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ֆիզիկական անձ Լևոն Մկրտիչի Գրիգորյանից գանձել 44.233 դրամ պարտավորության գումար, ինչպես նաև սույն որոշման կատարման օրվա դրությամբ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերը համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

01.07.2022թ-ի դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Ներմուծման ԱԱՀ	20.05.2022թ.	43.502	731		44.233	պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ծառայություն:
3. Որոշման օրինակն եռօրյա ժամկետում ուղարկել ֆիզիկական անձին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին, կամ վերադաս վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ստացա որոշման օրինակը _____ _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Կատարող՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների
կոմիտեի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և
պարտավորությունների կատարման ապահովման բաժին
Զարուհի Ֆարմանյան, հեռ. 010-30-91-91 /91-27/: